

Ռոշքեան բառարանին մէջ յիշուած հեղինակներ են նաեւ Համալ և Գաղիկ քերականագէտները, Տիրան վարդապետ մը՝ հեղինակ Մննդոց մեկնութեան, Արամ վարդապետ մը՝ հեղինակ Թուղթի մը առ Ատոմ Անձեւացեաց իշխան, որոնք կը գտնուին Էջմիածնի ձեռագրաց ցուցակին մէջ: Յիշատակուած են նաեւ Գրիգոր Մաղիատրոսի տաղեր, որոնք մեզի անձանօթ են, և ուրիշ տաղեր առանց հեղինակի յիշատակութեան:

Հոս մեր ամփոփած անունները ամբողջական չեն: Այլիշան դեռ ուրիշ մանրա-

մասնութիւններ եւս կու տայ, որոնց կըրնան զլմել փափաքողները:

Այս ընդարձակ թուարկումը Ռոշքեանի գործածած աղբիւրներուն, առարկայական արժէք մը կու տան Բառարանին: Անշուշտ վերջնական ըննութիւններու կը կարօտի անոնց ամէն մէկուն հարազատութեան հարցը, բայց ներկայ տուեալներով ասիկա զրեթէ անկարելի է:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)



**Ա Պ Ե Տ Ի Ք Կ Ո Մ Ա Ի**

**Զ Ա Ր Մ Ա Ն Ա Լ Ի Կ Ե Ա Ն Ք Ը**

(Շար. տե՛ս Բազմ. 1955. թ. 3, էջ 52)

Մինչ այս, պատմութեան դէպքերն ալ կը յառաջանային եւ ազատագրութեան դործը կը շարունակուէր: Եւրոպայի հակաթրքական միութիւնը քայլ առ քայլ դէպի հարաւ կը մղէր Օսմանցիները: Զբրահակիր բանակներ ամէն կողմէ կը սեղմէին թրքական մահելը: 1684 թուականը շատ յաջող էր կայսերական բանակին համար: Քիչ վերջ պիտի անդրադառնանք նաեւ Ապետիքի ունեցած դերի մասին, այս դործին մէջ: Հոս համառօտ ակնարկ մը միայն կ'ուզենք տալ այն դէպքերու մասին՝ որ Ապետիքը եւ Հոնդարիան իրարու կը զօղեն, եւ յատուկ նշանակութիւն մը կը ստանան այս ուղղութեամբ: Լոթարինկիոյ իշխանի առաջնորդութեամբ, Պատրն եւ Նոյպուրկ իշխաններու, Քափարա, Սալմ, Շթարեմպէրկ, Սուչէ եւ դեռ ուրիշ նշանաւոր զօրավարներու առաջնորդութեամբ՝ 35․000 զինուորներ քիչ ատենէն կը դրաւն Վիշկիրա-

տը: Լեսլի զօրավարը, Տրաւայի քովերը, օղնութեան հասնող Եէնիչէրի բանակին առջև կ'ելլէ յանկարծակի: Հալչպի փաշան նախ Վաճի մօտ կը կրէ պարտութիւն մը, ապա երկրորդ անգամ փախուստի կը մատնուի: Շարունակ ետ քաջուող թուրքերը Փէչլթն ալ կը պարպեն: Էրտի քովերը 10․000 հոգիէ բաղկացած բանակ մը՝ Պօղոս Էսթերհազի կուսակալի առաջնորդութեամբ՝ կ'աւելնայ միացեալ բանակներուն վրայ: Պուտան սակայն տակաւին թուրքերու ձեռքը կը մնար:

Այս մթնոլորտը կը տիրէր, ուրեմն, երբ Ապետիք երկրատէր կը դառնար. աս պատճառ եղած էր Հունգարիոյ հանդէպ լաւատեսութեան մը, եւ կարելի կը դարձնէր նոր կեանքի մը սկզբնաւորութիւնը: Շարունակական յաջողութիւնները նոր դործի եռանդ կը ներշնչէին քրիստոնեայ ռազմական կազմակերպիչներուն:

Իկէրի Սորհրդարանի թուղթերուն մէջ